ձայնութիւն Ղազախ քաղաքում բանակցութիւններ սկսելու, սակայն, նրանցից այդ առթիւ որևէ պատասխան չենք ստացել ցայսօր:

Վրաստանի հետ մեր յարաբերութիւնները բարեկամական են:

Մեծ պետութիւնների վերաբերմամբ մեր քաղաքականութիւնը մնում է նոյնը:

Պարսկաստանի հետ շարունակւում են բարեկամական յարաբերութիւնները. մեր ներկայացուցիչ Ց. Արղութեանին հրահանգւած է մշակել ընդհանուր համաձայնագիր երկու պետութիւնների միջև, որը ստանալուց յետոյ կը ներկայացնենք խորհրդարանի քննութեան:

Վերջում կարդում է այն բոլոր օրէնքներն ու վարկերը, որ խորհրդարանի լիազօրութեամբ հաստատել ու բաց է արել նախարարների խորհուրդը:

Նախարարապետի ճառը ծածկւում է բուռն ծափահարութեամբ:

Որոշւում է քննութեան առնել նախարարապետի զեկուցումը, որից յետոյ աղմկալից, երկարատև ծափերի տակ ամբիոն է բարձրանում պատգամաւոր Ն. Աղբալեանը:

Ն. Աղբալեան. — Պարոնայք պատգամաւորներ, Հայաստանի հանրապետութեան նոր կառավարութիւնը հանդէս եկաւ արտակարգ պայմաններում: Այդ պայմաններից գլխաւորն այն էր, որ մեր հարևան տէրութիւններից մէկն ունեցաւ յանկարծական փոփոխութիւն, յայտարարեց իրեն մեծամասնական և անմիջապէս մի մարտահրաւէր ուղղեց Հայաստանի հանրապետութեան, որով զգացնել տւեց, թէ իր իսկական բնոյթը փոխած չէ, թէև իր կերպարանքը ուրիշ բան է դուշակել տալիս:

Երկրորդ հանգամանքն այն էր, որ մեծամասնական շարժման ազդեցութիւնը տարածւեց նաև Հայաստանում և ինչ-ինչ մարդիկ զանազան վայրերում փորձեցին վարից առաջ բերել նմանօրինակ փոփոխութիւն: Ես անհրաժեշտ եմ համարում մատնանշել այն վերաբերմունքը, որ ունէր կառավարութիւնն ու ղեկավար կուսակցութիւնը հանդէպ մեծամասնականների:

Մեր երկիրը՝ հաւատարիմ ռամկավար կարգերին՝ գործով ցոյց տւեց, որ կուզէ լինել ապաստարան իրենց զաղափարի համար հալածանքի ենթարկւած մարդկանց. Դենիկինի յաղթութեանց հետևանքով հալածւած մեծամասնականները՝ հալածւելով նաև Վրաստանում՝ ապաստան գտան Հայերի մօտ:

Կառավարութիւնը նրանց ընդունեց, գործի դրեց, ապրելու հնարաւորութիւն ընձեռեց, մինչև որ կը փոխւէին քաղաքական պայմանները և կարող կը լինէին վերադառնալ իրենց տեղերը: Սա մի տուրք էր, որ տալիս էր կառավարութիւնը, մի պարտք էր սա, որ հատուցանում էր ղեկավար կուսակցութիւնը՝ զաղափարի համար հալածւածներին, որովհետև ինքն էլ շատ էր հալածւել: Բացի այդ, հալածեալները մերազգի էին, նրանք չէին կարող Վրաստանում և ղենիկինեան Ռուսաստանում լաւ վերաբերմունք գտնել: Բայց մենք ամենքս այն համոզման էինք, որ այս մարդիկ գալով այստեղ, ստանալով ապրուստ՝ իրենց հմտութիւնը կը գործադրեն իրենց ժողովրդի օգտին: Նրանք այդպէս էլ խօսք տւած էին. ասել էին, որ Հայաստանը իրենց համար մի կայան է, երբ կը պարզւեն հանգամանքները, այստեղից կը հեռանան: Եւ ուրիշ կերպ չէր էլ կարող լինել, որովհետև նրանց համար պարզ էր, որ Հայաստանում տիրում է մի կուսակցութիւն՝ աւելի հին և աւելի հմուտ, քան իրենցը: